

**ԹՈՒՐԲԱԿԱՆ ԲՈՒՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՐԱԶԱՆՈՒՄԸ
ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆԻ ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ՍԱՄՎԵԼ ԻՍԿԱՆԳԱՐՅԱՆ

Բանաստեղծ, դրամատուրգ և մանկավարժ Թովմաս Թերզյանը (1840—1909) ապրել և ստեղծագործել է Կոստանդնուպոլսոյում:

Տարօրինակ ճակատագիր ունեցող այդ քաղաքում իրար էին հանդիպել Արևելքն ու Արևմուտքը. նույնիսկ դժվար էր որոշել, թե որտեղ է վերջանում արևմտյան քաղաքակրթությունը և որտեղից սկսվում Արևելքը: Մի բան հաստատ էր, սակայն, որ նախկին բյուզանդական կայսրության մայրաքաղաքը XIX դ. կեսերին ոչ միայն որևէ նշույլ չէր պահպանել անցյալի իր փառքից, այլև պատենշի էր վերածվել հվրոպական առաջադիմության ճանապարհին: Ահա այդ ժամանակվա Պոլսի պատկերը. «Եթե բնակարանեդ առտու մ'ելնելեդ ետև՝ քանի մ'օրեն տուն դառնաս, նամանավանդ ձեռքդ, ոտքդ չկտրած և դիակի պես դառնաս, դարձյալ ինքզինքդ պետք է բարեբախտ համարես, ինչպես որ քաջ գիտես, կյանքը խիստ աժան է այս կողմը»¹:

Հանդես գալով նման միջավայրում՝ Թ. Թերզյանը բավական վաղ ճանաչեց թուրքական բռնապետության անմարդկային էությունը, նկատեց այն «վայրի գաղանին», որը յուր պիղծ որչեն գլուխն հանած դուրս կը թքնե նվրոպիո երեսին»²: Նվ իր գեղարվեստական զինանոցի բոլոր միջոցները հենց սկզբից նա ծառայեցրեց իր տեսած ժանտահոտ իրականության մերկացմանն ու ժխտմանը:

Դեռ 50—60-ական թվականներին գրած և բազմիցս բեմադրված իր պատմական ողբերգություններում, թեկուզև այլաբանորեն, Թ. Թերզյանը արտացոլում է ժամանակի քաղաքական կյանքի հանգամանքներն ու հասարակական տրամադրությունները: Նրա պիեսներում հանդես եկող պարսիկ, ըյուզանագացի և այլ թշնամիների անվան տակ ենթադրվում էին թուրք բռնակալները, որոնց նկատմամբ հայ ժողովուրդը լցվում էր ցասումով և վրեժխնդրության զգացումով: Այդ բանը հաստատվում է «Սանդուխտ» ողբերգության³ օրինակով, որն առաջին անգամ ներկայացվել է 50-ական թվականների վերջերին, Օրթագյուղի Բարեսիրաց ընկերության թատրոնում: Գեղարվեստորեն մշակելով հին հայկական վկայաբանություններից մեկը՝ Սանդուխտի վեպը, Թերզյանն իր այս ստեղծագործության առանցքը դարձնում է հին ու նոր կրոնների՝ հեթանոսության և քրիստոնեության դաժան պայքարը, այն մարմնավորում բռնակալ հոր՝ Սանատրուկի և նրա քրիստոնյա դստեր՝ Սանդուխտի միջև առաջացած կոնֆլիկտով ու բախմամբ, որն ավարտվում է հեթանոս թագավոր Սանատրուկի նազելի դստեր կործանմամբ: Ինչպես փրավացիորեն նկատել է թատերագետ Գ. Ստեփանյանը, «դժվար չէր հեթանոս Սանատրուկի տեղ պատկերացնել մահմեդական մի կայսր»⁴:

«Սանդուխտի» բեմադրությունների պատմությունը մի ուշագրավ իրողություն է բացահայտում. շերտորեն ծափահարելով ազատասեր հերոսունհուն՝

¹ Մ. Մամուրյան, Երևան, 1966, էջ 405:

² Թ. Թերզյան, Բանաստեղծությանց ամբողջական հավաքածո, հ. 2, Վենետիկ, 1929, էջ 36:

³ Թ. Թերզյան, Սանդուխտ, Կ. Պոլիս, 1862:

⁴ Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Երևան, 1963, էջ 232:

միևնույն ժամանակ հանդիսատեսը չէր թաքցնում բռնակալների դեմ ուղղված իր հակակրանքը, քաղաքական ցույց էր անում ընդդեմ ժամանակի թուրք բռնակալների: Բնորոշ է հայ թատրոնի պատմության մեջ իր նմանը չունեցող այն եզակի դեպքը, որը տեղի է ունեցել 1864 թ. մայիսին, Ջմյուռնիայի «Վասպուրական» թատրոնում: Շնորհալի դերասանուհի Արուսյակ Փափազյանի մարմնավորած Սանդուխտն այնպիսի կրքեր է բորբոքում թատրոնում, որ հանդիսատեսները մի պահ ինքնամոռացության մեջ ընկնելով՝ բեմ են նետում հայկական մի դրոշակ: Այդ մասին իզմիրում լույս տեսնող «Արշալույս արարատյան» թերթը գրում է. «Արուսյակի քանի մ'անգամ պսակներ նետվեցան ու անգամ մ'ալ հայկական դրոշակ, որ առաջին անգամն էր այս Վասպուրական թատրոնին տեսարանին վրա»⁵: Հասկանալի է, որ նման բան այլևս կրկնվել չէր կարող սուլթանական թուրքիայում, որտեղ Բարձրագույն դռան ազգահալած քաղաքականությունը, մանավանդ 1876 թ. հետո, երբ իշխանության գլուխ անցավ ժայռահեղ հետադիմական սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը, գնալով ավելի ու ավելի դաժան ձևեր էր ընդունում: Քաղաքական ու տնտեսական առումով կաթվածահար այդ երկիրը բանտի վերածվեց քաղամաթիվ ժողովուրդների և առաջին հերթին հայերի համար:

Հայրենասեր բանաստեղծը լռել չէր կարող: Իր ժողովրդին բաժին հասած անլուր հալածանքներից ու հետապնդումներից անմասն չմնաց նաև Թ. Թերզյանը՝ Պոլսի ամենաճանաչված հայերից մեկը, որը, իբրև մի ճշմարիտ լուսավորիչ, մանկավարժական լայն գործունեություն էր ծավալել ինչպես հայոց, այնպես էլ թուրքական միջավայրերում՝ կարծելով, թե կարելի է քաղաքակրթել երկրում տիրապետող դիրք գրաված թուրք տարրերին ևս: Հարպեի զինվորական ուսումնարանի տնօրեն Զեքի բեյի խնդրանքով նա հրահանգիչ պատմությունների մի ժողովածու էր կազմել ֆրանսերեն, որին տնօրենը հավանություն էր տվել և, հրատարակելով «La fleur des anecdotes» («Անեկդոտների փունջ») վերնագրով, այն որպես դասագիրք գործածության մեջ էր դրել ուսումնարանում: Կայսերազուն իշխաններից մեկի ձեռքով գրքից մի օրինակ հասնում է կասկածամիտ սուլթանին: Համիդը կանյոտ է Զեքի բեյին և հարցնում, թե ո՞վ է հանդգնել նման գիրք հեղինակել: Նա զայրացած մատնացույց է անում գրքի այն էջերը, ուր պատմություններ կային կայսրերի ու թագավորների մասին: Վտանգի հոտ առնելով՝ դժգունած Զեքին տալիս է Թերզյանի ևս մեկ ժողովածուն: Վերոհիշյալ հատվածներում իր դեմ ուղղված ակնարկներ տեսնելով՝ Աբդուլ Համիդը արգելում է այդ դասագրքի գործածությունը զինվորական ուսումնարանում և հրամայում Թերզյանին վտարել ինչպես Հարպեից, այնպես էլ պետական բոլոր վարժարաններից:

Խորապես վիրավորված, դառնացած ու վրդովված այդ անմիտ միջադեպից՝ Թերզյանը որոշում է հեռանալ Թուրքիայից և բնակություն հաստատել Եվրոպական որևէ երկրում, մանավանդ որ ընտանիքով Անատոլիայի անապատներն աքսորվելու վտանգն էլ էր սպառնում նրան, սակայն մեկնելու առտունություն ստանալ չի հաջողվում: «Բռնակալին անհասկացողությունը և այդ հիմարական քմահաճույթը, — պատմում է Ա. Չոպանյանը, — իր վրա գեշ ազդած էին և այդ ազդեցությունը անջնշելի մնաց իր մեջ, թեև կը զգուշանար բնականաբար զայն մտերիմներու շրջանակեն դուրս հայտնել»⁶:

Պոլսում ապրելն անտանելի էր դարձել, քանզի մարդկային բնական կյանքն ու ազատ միտքը վայրագաբար հալածվում էին: «Հալածանքի մանյա ունեցող խելագար սուլթանի» համար⁷ հասարակության մեջ ամենից մեծ վարկ ունեցողները լրտեսներն ու լրտեսապետներն էին: Նա ամեն ինչ մեջ, ինչպես

⁵ «Արշալույս արարատյան», 1864, № 728:

⁶ Թ. Թերզյան, Բանաստեղծությունց ամբողջական հավաքածո, հ. Ի, Վիեննա, 1929, Առաջաբան (զրկց՝ Ա. Չոպանյան), էջ ԻԵ:

⁷ Տե՛ս Չ. Ծ ա յ ա ն, Ինքնակենսագրություն (Ե. Չարենցի անվան զրադամություն և արվեստի թանգարան, Զ. Ծ ա յ ա նի ֆոնդ, № 6, էջ 321—322):

ամեն մի բռնակալ, ակնարկներ էր տեսնում՝ ուղղված իր դեմ: Ուստի շատ բառերի հետ միասին արգելել էր նաև առաջ բառի գործածությունը, նույնիսկ գիտական գրականության մեջ, որովհետև դրա տակ ակնարկ էր տեսնում իր բնակավայրի հասցեին, որը թուրքերեն «եքլտրզ» (աստղ) բառով էր կոչվում: Եվ ահա, 1890 թ. մի օր լրտեսները նրան լուր են հասցնում, թե Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի «Պատկեր» ամսագիրը մի ամբողջ բանաստեղծություն է տպագրել՝ աստղին նվիրված, լեցուն ամենամոռայլ արտահայտություններով⁸: Խոսքը Թ. Թերզյանի «Առ աստղ» ստեղծագործության մասին էր: Կառավարության հրամանով «Պատկերի» հրատարակությունն ընդմիջտ արգելվեց: Իմանալով բռնակալ սուլթանի այդ նոր կամայականության մասին և տեսնելով, թե ինչ հետևանք ունեցավ իր բանաստեղծության տպագրությունը՝ Թերզյանը որոշում է այլևս ոչինչ չհրատարակել մամուլում: Եվ իրոք, մինչև կյանքի վերջը նա շատ քիչ բան է հրատարակում: Սակայն դա չի նշանակում, թե դադարել էր ստեղծագործելուց կամ, առավել ևս, հաշտվել էր անմիտ ըրող-նակալության հետ: Բանաստեղծը գրում էր, որովհետև չգրել էր կարող, իսկ ձեռագրերը հանձնում էր իր օտարազգի բարեկամներին, քանզի վախ ուներ, թե մի օր իր տունն էլ խուզարկության կենթարկվի: Թերզյան մի պատճառն էլ այդ է, որ նրա մահվանից հետո բավական շատ անտիպ գործեր էին մնացել: Թերզյանի ողջ քնարերգությունը մի յուրօրինակ կոնիվ է ներկայացնում ընդդեմ թուրքական բռնապետության: Բանաստեղծը մե՛րթ անդրադառնում է իր հարազատ ժողովրդի ծանր կացությանն ու թշվառ վիճակին, որն անմիջական հետևանքն էր սուլթանական կառավարության վարած ազգահալած քաղաքականության, մե՛րթ այլաբանական պատկերների միջոցով նշավակում բռնակալությունը, մե՛րթ էլ խոսում բացահայտ ու որոշակի: Այսպես, դեռ 70-ական թվականների սկզբներին գրած իր մի քերթվածում Թերզյանը հոգու մորմոքով նկատում է.

Չորս նոդներնիս ալրևացավնը՝
 Լսվի կանանց վայնասում.
 Մեր ետին կոծ է և հրգեհ,
 Դիմացն անհույս մթությունը:

Կյանքի արտաքին հրապուրիչ քողի տակ բանաստեղծը հայտնաբերում է մի գարշելի իրականություն, ուր սոսկալի նախճիրներ են կատարվում: Փառքի, ոսկու և արյան ծարավի մարդը ելնում է իր նմանի դեմ և վայրի գազանի նման հոշոտում նրան.

Իրարու դեմ ի՛նչ սոսկալի նախճիրներ.
 Ի՛նչ տենչք արյան... և ո՞վ գիտե ի՛նչ վայրագ
 Սիրո կրակներ կամ կիրք փառաց կը վառին
 Այդ մութ հոգաց անգիտակից խավին տակ¹⁰:

Կենաց բաժակը գնալով լցվում էր թուլյնով ու լեղիով, արյունով ու արցունքով: Թերզյանի պոեզիայում գույներն ավելի ու ավելի են մոռացվում. ահեղ պատանքն է խավարի նման ծածկում աշխարհն ու մարդկանց, և «անառավոտ գիշերվա» մեջ շվարած մարդու հոգին ցավով է ընկալում արտաքին աշխարհից ստացած կենսական գրգիռները:

Համիդյան ռեժիմի շրջանում Թերզյանի քնարն ավելի մարտական է դառնում: Եվ բանաստեղծը, որին ավելի բնորոշ էր մեղմ, հավասարակշռված խառնըվածք դրսևորելը, իր պայքարի սլաքն է ուղղում ընդդեմ «կարմիր» սուլթանի

8 Թ. Թերզյան, Առ աստղ («Պատկեր», 1890, թիվ 3, էջ 63):

9 Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 103:

10 Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 210:

և նրան շրջապատած քստմենելի ոհմակի, որն ութսունական թվականների կեսերից արդեն որոճում էր հայաստանության իր՝ պատմության մեջ նմանը չունեցող ոճրագործ ծրագիրը։ Արնախում սուլթանը հայի արյան էր ծարավի։ Թերզյանը համոզված էր, որ մարդկային կյանքն ու ոգին ճնշել չի լինի, և ինչքան էլ մոլեգնի տարերքը, միևնույն է, իմաստուն բնության օրինակով մարդկությունն էլ մի օր կվերածնվի և կթալի դեպի լույս ու երջանկություն։ Նա այս մասին խորհրդածում է առաջին անգամ 1887 թ. «Երկրագունդ» հանդեսում տպագրված «Զարթոնք» քերթվածում, որը ստեղծագործական հետաքրքիր պատմություն ունի։ Հանդեսի խմբագրությունը կամ թերևս Թերզյանն ինքը անխոհեմ էին համարել տպագրել բանաստեղծության հետևյալ երկու տները, որոնք հագեցած են քաղաքական շեշտերով․

Կամ աղատության և հայրենյաց սեր
Կրսպառազինեն դաշ քո վրեժխեղիր,
Եվ անտառախիտ քաջաց սրվիններ
Դրոշիդ ծալքին տակ դընան լուսալիր․

Ումրերու ծուխին ամպով պաշարված,
Երիվարդ արյանց մեջ սալասմբակ,
Կիյնաս կարեվեր, աչքդ յերկինս հառած,
Հափշտակած դրոշդ եղավ քեզ պատանք¹¹։

Թերզյանն այսպես անխուսափելի կործանում է կանխատեսում սուլթան Աբդուլ Համիդի համար նրա իշխանության առաջին իսկ շրջանում, միաժամանակ մերժում երկրում հաստատված անմարդկային կարգերը։

Եվ մի՞թե այնքան միամիտ մի ստեղծագործություն էր «Առաստղ» քերթվածը, որը տպագրելու համարձակություն ունենալու համար 1890 թ. արգելվեց հայոց պատրիարքարանի «Պատկեր» ամսագիրը։ Ասենք, որ մեր գրականագիր Թերզյանի այդ երկի բովանդակությունը ճիշտ չի հասկացվել և ներկայացվել։ Այնտեղ տեսել են միայն բնության նկարագրություն, բանաստեղծական անմեղ խորհրդածություն, բայց ոչ երբեք որևէ ակնարկ՝ ուղղված ժամանակի մոռյալ իրականությանը։ «Բանաստեղծությունը,— գրել է Մ. Ծանաշյանը,— ոչ մեկ կերպով կ'ակնարկե ըլլա՝ Սուլթանի անձին, ըլլա՝ անոր պալատին (Երևույթ)։ Քերթվածին առաջին մասը հուզումով լի ուղերձ մըն է առաստղ, անուշ՝ ինչպես հույսը, և կազդուրիչ՝ ինչպես լույսը։ Բանաստեղծին սիրտը կը խոսի հոս, տենչալով հոգեկան խաղաղության և երջանկության։ Կ'երգե անսահմանությունը, զոր իր հոգիով կ'ուզե գրկել, չկարենալով մտքովը հասնիլ անոր։ Երկրորդ մասի մեջ, ընդհակառակն, բանաստեղծը կը խոսեցնե միտքը, և կը ջանա թափանցել աստեղագարդ երկնքի մը անհունության մեջ։ Հոգեպաշտ փիլիսոփայությամբ մը կ'անցնի նյութեն հոգեկան մեծություններուն, կյանքեն՝ անմահության, և ցավեն՝ անմոռյալ երանության։ Կ'երևակայե տեսնել աշխարհներ, անհունի ծոցը թաղված, ուր երջանիկ էակներ կը սնանին լույսով, երգով և գույնով»¹²։ Այս ամենը ճիշտ է, հարկավ, բայց «երբանո՞վ է նման բանաստեղծի տեսածին ու ապրածին։

Դժգոհ լինելով ժամանակի դաժան իրականությունից, որտեղ կյանքի տարրական պայմաններն իսկ բացակայում էին, Թերզյանն իր երևակայության ուժով հրաշագործում է մի ուրիշ եզերք, իր հոգու հայրենիքը, որտեղ

Չունի ներկան հոգեր, անցյալը՝ կրսկիծ,
Ապագան՝ կասկած,
Կուտից ժրպիտն անբիծ է հոն.—պատանյակք

¹¹ Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 343։

¹² Մ. Ծանաշյան, Մաղկաքաղ արգի հայ գրականության, հ. 1, Վենետիկ, 1957, էջ 217։

Դրդյալք ի խոլ ճիվաղե
Չեն արշավեր ըսպառազեն.— հոն դափնին
Արյունազանգ չէ:
Գեղեցիկն իսկ է անոնց իղձ և օրենք,
Ճշմարտություն՝ ճանապարհն.
Սեր է լապտերն և ուղեցույց որ տանի
Բաստից ի տաճարն:
Անոնց սընունդն են երգք և լույս և երփունք.
Հոն երջանիկք կը բնակին...¹³

Ահա թուրքական բռնապետության այնքան ներհակ մի պատկեր, որի քաղաքական բովանդակությունը որսացել էր դրականյան գրաքննությունը և որից այնպես սարսափել էր սուլթանական կառավարությունը: Չէ՞ որ բանաստեղծը մարդկանց ցույց էր տալիս ճշմարտության ճանապարհը՝ մռայլ իրականությունը հակադրելով լավագույն կյանքի իր իդեալը: Իսկ դա, հասկանալի է, ձեռնտու չէր տիրողներին: Մյուս կողմից՝ վերոհիշյալ հատվածում անշարժ պերճախոս են «...պատանյակք Դրդյալք ի խոլ ճիվաղե Չեն արշավեր ըսպառազեն» և «...հոն դափնին Արյունազանգ չէ» տողերը: Այդ ի՞նչ ճիվաղի մասին էր խոսքը: Արդուլ Համիդը հասկացե՞լ էր դա: Կարծում ենք, երկու կարծիք լինել չի կարող:

Թուվմաս Թերզյանը ոչինչ չունեի թուրք ժողովրդի դեմ: Ավելին, ինչպես Ա. Չոպանյանն է վկայում, «Հրանտ և Արոս» վիպերգության մեջ նա «սուլթանական հարեմի բարբարոս կյանքը ձաղկող գլուխներում քով, ունի և գլուխ մը, որ թուրք ժողովրդական տիպարի մը ներքողման նվիրած է»¹⁴: Ի դեպ, Թերզյանի այդ ստեղծագործությունը, որի բնագիրը, ցավոք, չի պահպանվել, 1886 թվականին ամբողջությամբ պատրաստ էր, սակայն լույս չի տեսել: Նույն թվականին «Երկրագունդ» հանդեսում տպագրվել է Թերզյանի էպիկական պոեմից մի հատված «Հենն» վերնագրով՝ հեղինակի հետևյալ ծանոթագրությամբ. «Հրաճա և Արաճ քերթվածը իրական դեպքի մ'ավանդության վրա հիմնյալ է: Ամբողջ վեպն առ այժմ անհնար ըլլալով ի լույս ընծայել, քանի մը հատված ներվի մեզ քաղել անտի: Հետագայն նկարագիրն է հուսահատության Հրանտի ընդ կորուստ յուր սիրատարի Արուսին»¹⁵:

Ըստ Ա. Չոպանյանի պատմածի, Թերզյանն իր այդ երկում անդրադարձել էր սուլթանական արքունիքի պերճությունն ու թշվառությանը, համարձակորեն ձաղկել նրա բարբարոսական բարքերը¹⁶: Պոեմի վերջում հերոսները՝ Հրանտն ու Արուսը, անվերջ տանջանքներից ու տառապանքներից հետո կործանվում են: Բանաստեղծը տաճնապում էր մարդու համար: Նա պատկերում է մի կյանք ու միջավայր, որտեղ մարդկայնորեն գեղեցիկն ապրել չի կարող: Ինչպես պոեմի վերջաբանը, այնպես էլ ամբողջ ստեղծագործությունը հնչում էր իբրև մեղադրանք սուլթանական բռնակալության դեմ: Ահա թե ինչու 1886 թվականին ամբողջությամբ պատրաստ պոեմը (4000 տող) լույս տեսնել չէր կարող:

Այո՞, Թերզյանը ոչինչ չունեի թուրք ժողովրդի դեմ, բայց նրա մեջ ապրող ազնիվ քաղաքացին ու ազգասեր հայը չէին կարող հաշտվել իրենց տեսած երկրային դժոխքի հետ, անտարբեր գտնվել հարազատ ժողովրդի ճակատագրի նրկատմամբ, չբողոքել այն անլուր բռնությունների և ոճիրների դեմ, որ գործվում էին հայակեր սուլթան Աբդուլ Համիդի հրամանով: Ականատես լինելով 1895—1896 թթ. հայկական արյունալի կոտորածներին, երբ թուրք ենիչերիները բորենու նման վայրագաբար հոշոտեցին մոտ երեք հարյուր հազար անմեղ հայերի, Թերզյանն իր բողոքի ձայնն է բարձրացնում՝ գրելով իր ամենա-

¹³ Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 347:

¹⁴ Նույն տեղում, Առաջաբան, էջ 18:

¹⁵ «Երկրագունդ», 1886, № 6, էջ 252:

¹⁶ Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 422—425:

խորխոտ ու մարտական բանաստեղծությունները՝ «Այգ», «Խարազան» և «Կայսրուհի» քերթվածները: Դրանք նույնպես այն ժամանակ տպագրվել չէին կարող և լույս աշխարհ գալու համար ստիպված էին սպասել ավելի նպաստավոր ժամանակներին: Առաջին անգամ այս երկերը լույս տեսան Թերզյանի մահից 20 տարի հետո միայն՝ 1929 թ. Վենետիկում հրատարակված նրա «Բանաստեղծությանց ամբողջական հավաքածուում»:

Ինչ-որ տեղ զարմանալ կարելի է վերոհիշյալ քերթվածներում արտահայտված տրամադրությունների համար, եթե նկատի ունենանք ժամանակի դաժան պայմանները: Համենայն դեպս, այդ տարիներին Պոլսում ապրող և ստեղծագործող որևէ ուրիշ բանաստեղծի մոտ նման ըմբոստ տրամադրություններ չեն հանդիպում:

«Այգ» քերթվածում Թերզյանը կրկին անդրադառնում է «խուլ ճիվաղի» թեմային, հայ գրականության մեջ առաջիններից մեկը լինելով՝ փորձում ստեղծել արյունոտ սուլթանի կերպարը: Եվ պետք է ասել, որ այդ բանը նրան հաջողվել է: Բանաստեղծը նկարագրում է արթնացող բնության գեղեցկությունն ու անկրկնելի հմայքը՝ դրան հակադրելով մարդկային կյանքի հակասությունները, չարիքներն ու արհավիրքները: Բնության գեղեցիկ անկյուններից նա հասնում է տիրակալի որջը, պատկերում նրա խղճի խայթերը, անքուն գիշերվա տառապանքները և «հրատուշոր» խարազանով ձաղկում բռնավորի ճակատը:

Ո՛հ, գուցե հի՛մա բռնավորն ալ վատրշվիր՝
 Զոր տանջեցին գիշերն ի բուն խղճին խայթեր՝
 Պահ մը լուսավո՛ղ ապահովցած կ'ուզե ննջել՝
 Դրժոխք դարձած ձեղուններուն տակ ոսկեթել:
 Ո՛վ անընկեց անուրջը որ խուլս կուտաք հապճեպ,
 Գիշերներու արհավրաց հետ՝ պա՛հ մ'են դարձեք.
 Խուժեցե՛ք այդ մարմարյա սլանց տակ պահակաց
 Ըսպասնալից սրվիններու խրոան մեջեն.
 Ձաղկեցե՛ք զինք ձեր հրատուշոր խարազանով,
 Ընդոստ ցաթկն թափած արյանց յուր ի մութ մով.
 Հազարավոր կրճախք ցցված ամենուտեք՝
 Ամեն կողմն աղաղակեն իրեն. «Անե՛ծք»...
 Եվ դալկահար եթե վազե պատուհանին,
 Տեսնե զԱրե որ բարձրանա յանեղր երկին
 Իբրե հրեղեն կառք ուր բազմած Աստվածություն
 Վերջին ատյան կը կանչե զինք դողդաջուն¹⁷:

Ավելի վրիժառու էջ է «Խարազան» նշանավոր բանաստեղծությունը, որով Թերզյանն ամբողջացնում է սուլթան Համիդի կերպարը՝ անկրկնելի գծերով ներկայացնելով բռնակալի ճշմարիտ դիմանկարը: Ինչպես արդեն նկատվել է, սա ամենաուժեղն է սուլթանի կերպարը բացահայտող բանաստեղծություններից, որ երբևիցե ստեղծվել է հայ գրականության մեջ¹⁸:

Չնայած պալատի շորս դին դուրս ցցված ուռնիքին ու բերանաց գամփրոններին, որոնք հուսալիորեն պաշտպանում են սուլթանին, այնուամենայնիվ, նրա հոգին լի է անասնական վախով: Նրան այլևս չեն գրավում իր մեծազոր գահին հպատակ ազգերի ամբավ հարստությունները, շուրջը նազող հազարավոր հուրիները: Նա նիհար է ու դժգույն, հոնքերը կախ են, սիրտը՝ թուլալի, և տրամաբանը բնավ չի փարատվում: Անհանգիստ է սուլթանը: Մենյակից սենյակ անցնելով՝ նա ճանհանգիստ, միայնակ՝ ինչ-որ բան է փնտրում և ոչ մի տեղ հանգիստ չի գտնում: Անթիվ ոճիրներ գործած բռնակալը լավ գի-

¹⁷ Ա. Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 15:

¹⁸ Կ. Մամիկոնյան, Թովմա Թերզյանի ստեղծագործությունը (ՀՍՍՀ ԳԱ «Լրագր», 1974, № 9, էջ 55):

տի, որ գալու է հատուցման ժամը. իր սոսկումի մեջ նա ելք է որոնում: Բայց ուշ է արդեն: Պատմության ահեղ դատաստանի առջև հայի արյունով թաթախված սուլթանն արդարացում չունի: Մարդկությունը նրան ներել չի կարող: Եվ այստեղ ահեղ խարազանի նման նրան հարվածում են բանաստեղծի խոսքերը.

Վե՛ր վերցուր գրլուխդ, արքա՛, վե՛ր վերցուր.
Տե՛ս սա ջահերուն ետին լուսասփյուռ
Մատ մ'է երկնցած որ դանդաղ դանդաղ
Այդ ռսկեղրվազ պատերուդ ի խաղ
Կր գրբ մեկիկ մեկիկ՝ բաղդին պես.
«Ա՛լ ժամդ հասավ, Մա՛նե, Թեկե, Փարես»¹⁹,

Կենսական հիմք ու միջավայր ունի նաև «Կայսրուհիդ» բանաստեղծությունը, որն ուղղված է Գերմանիայի կայսրուհու դեմ: Վերջինս իր կայսր ամուսին Վիլհելմ Երկրորդի հետ հայկական եղեռնից քիչ հետո այցելեց սուլթան Համիդին: Այդ այցելությանը նրանք փաստորեն իրենց հովանավորող քաղաքականությունը դրսևորեցին և, շահագործելով հայոց մարտիրոսությունը, առատ ու ճոխ նվերներ ստացան Համիդից: Ողջ Պոլիսը գիտեր այն մասին, որ կայսրուհին ցանկացել էր տեսնել թուրքական բաղնիք կոչվածը, և սուլթանը հրամայել էր նրան տրամադրել իր կանանոցի գեղեցկագույն բաղնիքը: Լոգանքից հետո նրա ուսերին գցել էին մի շքեղ սփածանելի՝ մարգարիտներով ու զմրուխտեքարերով երկված: Կայսրուհին խնդրել էր իրեն նվիրել այդ սփածանելին: Սուլթանը հրամայել էր անմիջապես կայսրուհու սենյակն ուղարկել այդ իրը: «Աբդուլ Համիդ,— գրում է բանաստեղծուհի Անայիսը,— կնամեծադրվալ գիտեր երբեմն, մանավանդ Գերմանիո հետ»²⁰:

Ստեղծագործության նյութ դարձնելով այս միջադեպը՝ Թերզյանը որոշակի ընդհանրացում է կատարում՝ մերկացնելով ու դատապարտելով ընդհանրապես տիրողներին:

Կայսրուհի՛դ, լիաբուռն աղամանդք
Գլխուդ վրա կը ցանեն կեղծ ի խանդ.
Բայց մըտի՛ր քու սենյակդ ու քնեն՛,
Մեն մի քար արտասվաց կաթիլ մ'է:
Կայսրուհի՛դ, ձեռք կուտաս զվարթորեն
Հյուրընկալ մեկ ձեռքի մ'անօրեն.
Հա՛ն ձեռնոցդ, նայե՛ր պահ մը, Տիկի՛ն,
Ի՛նչ ահեղ արյուններ կը կաթին²¹:

Բանաստեղծության վերջում Թերզյանը դարձյալ պատմության ահեղ դատավճիռն է կարդում բռնակալների հանդեպ, և այդ վճիռը անբեկանելի է.

Կայսրուհի՛դ, քան ըզքեզ հզորագույն
Տիկիներ ալ եկան կանխագույն.
Բայց ամե՛նքն ալ ինկան... շինար լուկ
Այն Իշխանն յոր հուսանք անհողողդ²²:

19 Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 432: «Մանե, Թեկե, Փարես»—հաշված է, կշռված է, չափված է: Հստ Աստվածաշնչի՝ այս բառերը գրվեցին Բաբելոնի թագավոր Բալթազարի արքունիքի պատին՝ բաբելոնյան թագավորության կործանման նախօրյակին (տե՛ս «Մարգարեություն» Դանիելի, Ե, 25—28):

20 Անայիս, Հուշերս, Փարիզ, 1949, էջ 65:

21 Թ. Թերզյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 28:

22 Նույն տեղում: Վերջին տողում բանաստեղծն աստծուն է ակնարկում:

Այսպիսով, Թովմաս Թերզյանի ստեղծագործության մեջ ցայտուն կերպով արտացոլվել է համիդյան դարաշրջանի մոռյլ իրականությունը՝ իր արհավիրքներով և ողբերգականությամբ: Բանաստեղծը, անարգանքի սյունին զամենով արյունոտ սուլթան Աբդուլ Համիդին, միաժամանակ խարազանել է հայաշինչ քաղաքականության մեջ նրան հովանավորողներին: Ինչպես առաջինը, այնպես էլ վերջիններս արդարացում չունեն պատմության ահեղ դատաստանի առջև:

ОБЛИЧЕНИЕ ТУРЕЦКОГО ДЕСПОТИЗМА В ТВОРЧЕСТВЕ ТОВМАСА ТЕРЗЯНА

САМВЕЛ ИСКАНДАРЯН

Резюме

В творчестве западноармянского поэта, педагога и драматурга Товмаса Терзяна (1840—1909) ярко отражена турецкая тирания гамидовского периода. В армянской литературе Терзян был одним из первых, кто создал образ кровожадного Абдула Гаида. В своих знаменитых произведениях «Рассвет», «Бич», «Императрица» он изобличал султана-кровопийцу, одновременно гневно осуждая позицию крупных европейских держав в 1895—1896 годах в вопросе кровавой резни, организованной турецким правительством в Западной Армении, жертвами которой стало около 300 тысяч ни в чем не повинных армян. Голос правды в произведениях Товмаса Терзяна настолько звонок и убедителен, что ни Абдул Гамид, ни его покровители не найдут оправдания перед неумолимым судом истории.